



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 06/19**

18.02.2019թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (**այսուհետ՝ Կենտրոն**) քննարկելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի և 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

ՀՀ վարչական դատարանը (դատավոր՝ Կարեն Զարիկյան) (այսուհետ՝ Դիմող) 2018 թվականի դեկտեմբերի 6-ին դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի և 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Դիմողի կարծիքով՝ դատարանում քննվող թիվ ՎԴ/3098/05/18 վարչական գործով կիրառման ենթակա «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասը և 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը:

Դիմողը՝ վերլուծելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու սեփականության իրավունքը սահմանող հոդվածը, մասնավորապես՝ նշված իրավունքի սահմանափակման հիմքերը, հանգել է այն հետևության, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասը և 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ սահմանափակելով մարդկանց սեփականության իրավունքը, բավարար չափով որոշակի չեն և խնդիրներ են ստեղծում սեփականության իրավունքի իրագործման հարցում:

Դիմողի կարծիքով՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասը և 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը տարածվում են գրանցման ենթակա բոլոր գործարքների նկատմամբ, որոնք ենթարկվել են նոտարական վավերացման: Սակայն խնդրահարույց է այն հանգամանքը, որ

հանրային և մասնավոր իրավունքի ոլորտներում կնքված գործարքները ունեն տարբեր իրավական նախադրյալներ և առաջացնում են տարբեր իրավական հետևանքներ:

Մասնավոր իրավունքում, ըստ Դիմոդի, պայմանագիրը հանդիսանում է իրավունքներ և պարտականություններ առաջացնող հիմնական և առաջնային ակտը, որի առոչնչությունը համաձայն՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի հանգեցնում է նույն իրավական վիճակի, ինչ առկա է եղել մինչ գործարքի կնքումը: Նմանօրինակ իրավիճակի հաղթահարման միակ տարբերակը՝ կողմերի կամարտահայտությամբ նորից գործարք կնքելն է:

Մինչդեռ՝ հանրային իրավունքում պայմանագիրը հաջորդում է իրավունք սահմանող իրավական ակտին: Հանրային իշխանության մարմնի կողմից ընդունվում է իրավունք տրամադրելու վերաբերյալ վարչական ակտ (ինչն իր ամրագրումն է գտել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածում), որին հաջորդում է համապատասխան պայմանագրի կնքումը՝ տվյալ իրավունքը փոխանցելու մանրամասները կարգավորելու նպատակով: Տվյալ պարագայում «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետի խախտման հետևանքով պայմանագրի առոչնչությունն ինքնին չի վերացնում վարչական ակտը, քանի որ վարչական ակտի վերացման նման հիմք չկա: Միակ բացառությունը՝ պայմանով վարչական ակտն է, որի վերաբերյալ մանրամասներն ամրագրված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասով, որի համաձայն, եթե վարչական ակտի ուժի մեջ մտնելը պայմանավորված է եղել պայմանագրի կնքումով, ապա հետագայում պայմանագրի առոչնչությունը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված հիմքով՝ ինքնին հանգեցնում է վարչական ակտի ուժը կորցնելուն: Մնացյալ դեպքերում վարչական ակտը շարունակում է գործել, հետևաբար դրանով ամրագրված սեփականության իրավունքը ենթակա է պաշտպանության՝ վերջինիս պաշտպանության նույն ռեժիմով:

Նույնատիպ իրավիճակ է առաջանում նաև դատական ակտերի հարկադիր կատարման վարույթում աճուրդի արդյունքում անշարժ գույքի ձեռքբերման դեպքում: «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, հարկադիր աճուրդի արդյունքում հաղթողի՝ համապատասխան լոտի վերաբերյալ առուվաճառքի պայմանագիր կնքելու իրավունքը, իսկ նույն օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է աճուրդում հաղթած մասնակցի և հարկադիր կատարողի միջև, աճուրդն անցկացնելու օրը՝ դրա արդյունքների վերաբերյալ

արձանագրության ստորագրում, որն էլ հենց հանդիսանում է իրավունքը սահմանող վարչական ակտ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 53.2-րդ հոդվածն էլ իր հերթին սահմանում է, որ առուվաճառքի պայմանագիրը հիմք է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցամատյանում անհրաժեշտ գրառումներ կատարելու համար՝ բոլոր այն դեպքերում, երբ աճուրդով իրացվել է այնպիսի գույք, որի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Դիմողը հաշվի է առել նաև այն հանգամանքը, որ ինչպես տվյալ գործով կնքված առուվաճառքի ժամանակ (12.02.2001թ.), այնպես էլ ներկայումս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 562-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման: Ասվածից միակ բացառությունը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 299-րդ հոդվածի 4-րդ մասով, որն ամրագրում է հստակ պայմաններ, որոնց առկայության դեպքում պարտադիր նոտարական վավերացման պահանջը չի տարածվում համապատասխան պայմանագրերի վրա: Ընդ որում, նշյալ բացառությունը նախատեսված չի եղել տվյալ գործով կնքված առուվաճառքի ժամանակ (12.02.2001 թվական) և սկսել է գործել միայն 01.01.2012 թվականից (23.06.2011 թվականի ՀՕ-248-Ն օրենք): Հետևաբար՝ մինչև 01.01.2012 թվականը վարչական ակտի հիման վրա կնքված առուվաճառքի պայմանագրերի համար պարտադիր էր նոտարական վավերացման պահանջը, և ցանկացած դեպքում, երբ վարչական ակտի հիման վրա կնքված առուվաճառքի պայմանագիրը վավերացված է նոտարի կողմից, վրա է հասնում «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով և 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված իրավական հետևանքները:

Վերլուծելով վերոգրյալները՝ Դիմողը հանգել է այն հետևության, որ արդյունքում առաջանում է իրավական որոշակիությունից զուրկ իրավիճակ, քանզի մի կողմից՝ վարչական ակտի հիման վրա կնքված գործարքը համարվում է առ ոչինչ և ենթակա չէ պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով, և մյուս կողմից՝ վարչական ակտն ուժի մեջ է և առաջացնում է սեփականության իրավունքի հանդեպ լեգիտիմ ակնկալիք (բացառությամբ՝ պայմանով վարչական ակտի): Նշված նորմերով հստակ տարանջատված չեն վարչական ակտերի հիման վրա կնքված գործարքները, ավելին՝ սահմանված չեն դրանց չգրանցման հետևանքները, ուստի իրավական որոշակիության սկզբունքին դրանց համապատասխանելիության վերաբերյալ խոսք գնալ չի կարող:

Ըստ Դիմողի՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասը և 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, սահմանելով իրավունքը պետական գրանցման ներկայացնելու 30 օրյա ժամկետ, միաժամանակ չի

նախատեսում այն վերականգնելու որևէ հնարավորություն, ավելին՝ նման հնարավորություն սահմանված չէ նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, հետևաբար անկախ այն հանգամանքից, թե ինչ պատճառով է բաց թողնվել վերոնշյալ ժամկետը, դա հանգեցնում է դիմումի մերժմանը:

Ըստ Դիմողի՝ նման կարգավորումն ինքնին խախտում է սեփականության իրավունքի անարգել իրագործման սահմանադրական իրավունքը: Դիմողի համոզմամբ՝ վարչական մարմինն դիմելու ժամկետը չի կարող լինել անվերականգնելի և օրենսդիրը վարչական մարմինն, իսկ դատական բողոքարկման դեպքում՝ դատարաններին, պետք է տրամադրի ժամկետը վերականգնելու հնարավորություն՝ այն բոլոր դեպքերի համար, երբ այն բաց է թողնվել հարգելի պատճառով:

Վերոգրյալից ելնելով՝ Դիմողը գտել է, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասը և 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 60 և 79-րդ հոդվածներին:

Նշված գործով ՀՀ սահմանադրական դատարանում նիստը նշանակված է 2018 թվականի փետրվարի 26-ին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սույն սահմանադրական վեճի առարկան կազմող խնդրին առնչվող իրավակարգավորումների, մասնավորապես՝ **«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝**

6. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքներից (բացառությամբ միակողմ գործարքների) ծագող իրավունքները պետք է պետական գրանցման ներկայացվեն ոչ ուշ, քան այդ գործարքների նոտարական վավերացման օրվանից սկսած՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝

1. Պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը պարտավոր է մերժել իրավունքի պետական գրանցումը, եթե՝...

4) նոտարական վավերացում ստացած գործարքի հիման վրա պետական գրանցման համար դիմումը ներկայացվել է սույն օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված 30-օրյա ժամկետի խախտմամբ...:

Վերը նշված դրույթներից հետևում է, որ անշարժ գույքի նկատմամբ կնքված գործարքները ենթակա են նոտարական վավերացման, որից հետո դրանց պետք է ներկայացվեն պետական գրանցման (բացառությամբ միակողմ գործարքների)՝

նոտարական վավերացումից հետո՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, նշված ժակետում գործարքը պետական գրանցման ներկայացնելու պահանջը չպահպանելը հանգեցնում է իրավունքի պետական գրանցումը մերժելուն:

ՀՀ օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ անշարժ գույքի նկատմամբ գործարքի կնքման քաղաքացիաիրավական կարգավորումների հետ միաժամանակ, առանձին դեպքերում առկա են նաև վարչաիրավական կարգավորումներ, որոնք նախատեսում են նշված գործարքների կնքման որոշակի առանձնահատուկ ընթացակարգ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է հրապարակային սակարկությունների արդյունքում ձեռք բերված գույքի նկատմամբ գործարքի կնքմանը:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի՝ *Եթե սակարկություններով վաճառվելիք լուրն անշարժ կամ շարժական գույք է, որի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, ապա սակարկություններում հաղթողի հետ արձանագրության ստորագրման պահից նրան են անցնում համապատասխան լուրի վերաբերյալ առուվաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը:*

Նշված օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Աճուրդում հաղթած մասնակիցը և հարկադիր կատարողն աճուրդն անցկացնելու օրը ստորագրում են դրա արդյունքների վերաբերյալ արձանագրությունը:*

Աճուրդի արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի իմաստով, հանդիսանում է վարչական ակտ, որի հիման վրա, համաձայն գործող կարգավորումների, աճուրդում հաղթած անձի և աճուրդի կազմակերպչի միջև կնքվում է գույքի օտարման գործարք: Ընդ որում, **«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 53.2-րդ հոդվածի՝** *Եթե աճուրդով կամ ուղղակի վաճառքով իրացվել է գույք, որի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, ապա առուվաճառքի պայմանագիրը հիմք է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցամատյանում անհրաժեշտ գրառումներ կատարելու համար:*

Այսպիսով, գործող օրենսդրությունը նախատեսում է վարչական ակտի հիման վրա անշարժ գույքի օտարման գործարք կնքելու ընթացակարգ, որը ևս ենթակա է նոտարական վավերացման և պետական գրանցման: Ընդ որում, այս դեպքում նույնպես, համաձայն քննարկվող իրավակարգավորումների, նոտարական վավերացումից հետո գործարքը պետք է ներկայացվի պետական գրանցման վավերացումից հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ այդպիսի պահանջը չպահպանելը հանգեցնում է պետական գրանցումը մերժելուն:

Նշված իրավական հետևանքից բացի, քննարկվող իրավիճակում օրենսդրորեն կարգավորված չէ վարչական ակտի իրավաբանական նշանակության հարցը: Ավելին,

ինչպես արդարացիորեն նշում է Դիմողը, արդյունքում առաջանում է իրավական որոշակիությունից զուրկ իրավիճակ, քանի որ մի կողմից՝ վարչական ակտի հիման վրա կնքված գործարքը համարվում է առ ոչինչ և ենթակա չէ պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով՝ օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու հիմքով, և մյուս կողմից՝ վարչական ակտը շարունակում է մնալ ուժի մեջ՝ որպես չվերացված վարչական ակտ, և որն առաջացնում է սեփականության իրավունքի հանդեպ լեգիտիմ ակնկալիք:

Այսպիսով, վիճարկվող նորմերով հստակ տարանջատված չեն վարչական ակտերի հիման վրա կնքված գործարքներն այն գործարքներից, որոնց կայացման հիմքում վարչական ակտերը չեն: Բացի այդ, քննարկվող նորմերով կարգավորված չէ վերը նշված ժամկետի խախտման արդյունքում պետական գրանցումը մերժելուց զատ վարչական ակտի իրավաբանական ուժի և նշանակության հարցերը: Այս առումով, վիճարկվող իրավակարգավորումները խնդրահարույց են թվում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին համապատասխանության տեսանկյունից:

Այսպես, իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքն իր ամրագրումն է գտել ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածում, որի համաձայն՝

Հոդված 79. Որոշակիության սկզբունքը

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում բազմիցս անդրադարձել է **լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի** սկզբունքին:¹

«Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ,

¹ Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թիվ ՍԴՈ-881, 09.09.2008 թիվ ՍԴՈ-758 որոշումները:

որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համարեղելու իր վարքագիծը»։ Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները**։ Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»։²

Վերը նշված սահմանադրական կարգավորումների և ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումների լույսի ներքո ստացվում է, որ քննարկվող իրավակարգավորումներն իրենց անհատականության պատճառով անձի համար անկանխատեսելի են դարձնում սեփականության իրավունքի իրականացման իր իրավաչափ սպասելիքները։ Այլ կերպ ասած՝ իրավաբանական ուժը չկորցրած վարչական ակտի հասցեատիրոջ համար օրենքի անորոշության պատճառով անկանխատեսելի է դառնում սեփականության հանդեպ իր լեգիտիմ ակնկալիքը, որը բխում է չվերացված վարչական ակտից։

Ընդ որում, իրավական որոշակիության սկզբունքին անհամապատասխանությունը հանգեցնում է նաև սեփականության սահմանադրական իրավունքի խախտման։ Ուստի, սույն գործով վեճի առարկա իրավադրույթները քննության առարկա պետք է դարձվեն նաև սեփականության իրավունքի ճանաչման, երաշխավորման և պաշտպանության սահմանադրական մոտեցումների տեսանկյունից։

Հոդված 60. Սեփականության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք։

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է։

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով։

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի։

5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ։

...

Սեփականության իրավունքի տարրերը հանդիսացող տիրապետման, օգտագործման, տնօրինման քաղաքացիաիրավական իրավազորությունների

² ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշում։

բովանդակությունը բացահայտված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածում, համաձայն որի՝

Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնածի և այլ ձևերով:

Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Այլ կերպ կարելի է ասել, որ տնօրինման իրավունքը սեփականատիրոջ կողմից գույքի նկատմամբ իրավահարաբերություններ առաջացնելու, փոփոխելու կամ դադարեցնելու հնարավորությունն է:

Սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանն իր մի շարք որոշումներում անդադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը: Մասնավորապես, իր 18.03.2008թ. թիվ ՍԴՈ-741 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության 8 հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը»: Սահմանադրական այս դրույթի իրացումը երաշխավորվում է ինչպես Սահմանադրության այլ հոդվածներով (31, 42.1., 43, 44 հոդվածներ, 83.5. հոդվածի 1-ին և 2-րդ կետեր, 89 հոդվածի 3-րդ կետ, 105 և 105.1. հոդվածներ), այնպես էլ Հայաստանի Հանրապետության մի շարք այլ իրավական ակտերով, որոնք կարգավորում են սեփականության իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները, սահմանելով սեփականության իրավունքի սուբյեկտներին, սեփականության իրավունքի բովանդակությունը, սեփականության իրավունքի սահմանափակումների թույլատրելի շրջանակները, սեփականության իրավունքն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը, գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող այլ անձանց շահերի պաշտպանության մեխանիզմները:

2008թ. մարտի 18-ի թիվ ՍԴՈ-741 որոշման մեջ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը նաև նշել է. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2012թ. փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշման մեջ արձանագրել է. «Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ սեփականության իրավունքը ճանաչելով

որպես յուրաքանչյուրի հիմնական իրավունք, բացահայտվում է այդ իրավունքի բովանդակությունը, այն է՝ իր սեփականությունը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրավագործությունները՝ միաժամանակ որպես դրանց իրացման նախապայման սահմանելով **սեփականատիրոջ հայեցողությունը**: Սահմանադրական այս նորմում «իր հայեցողությամբ» ձևակերպման շեշտադրմամբ սեփականության իրավունքի իրացման հիմքում դրվել է սեփականատիրոջ հստակ արտահայտված կամքը, վերջինս դիտարկվում է որպես սեփականության իրավունքի իրացման պարտադիր նախապայման, և սեփականության իրացման գործընթացում վճռորոշ դերակատարություն է հաղորդվում անձի կամաարտահայտությանը: Այս դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ գույքային իրավունքների իրացումը պետք է իրականացվի սեփականության անձեռնմխելիության և պայմանագրային ազատության սկզբունքների հիման վրա, որոնք ենթադրում են, ի թիվս այլնի, **քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարություն և գույքային ինքնուրույնություն**»:

«Տնօրինման իրավագործությունը ենթադրում է սեփականատիրոջ կողմից օրենքով նախատեսված շրջանակներում ու կարգով գույքի նկատմամբ գործողություններ կատարելու կամ վերջինից ձեռնպահ մնալու միջոցով իր գույքի իրավական և փաստացի ճակատագիրը որոշելու իրավունք: Դա ոչ այլ ինչ է, քան հայեցողություն կամ, այլ կերպ՝ գույքի ճակատագրի հանդեպ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի առաջին մասում նախանշված շրջանակներում և օրենքով սահմանված պայմաններում ու կարգով **ինքնավար կամք դրսևորելու իրավունք**: Սակայն այդ կամքի ինքնավարությունը չի կարող անսահման լինել և չի կարող հակասել օրենքին, խախտել այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը»³:

Վերը շարադրված դիրքորոշման վերլուծությունը ցույց է տալիս, որ վիճարկվող օրենքի դրույթն անմիջականորեն միջամտում է սեփականության իրավունքի՝ որպես սեփականության գույքային իրավունքի իրականացմանը, խաթարում վերջիններիս սեփականության անձեռնմխելիությունը: Նման միջամտությունն անձին զրկում է վարչական ակտով իրեն տրամադրված գույթը իր հայեցողությամբ, ազատ կամաարտահայտությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու սահմանադրական իրավագործություններից:

Ընդ որում, ինչպես արդարացիորեն հիմնավորվել է Դիմողի կողմից, վիճահարույց է նաև անշարժ գույքի նկատմամբ իրավունքը պետական գրանցման ներկայացնելու 30 օրյա ժամկետի սահմանումն այն հաշվով, որ օրենսդիրը միաժամանակ չի նախատեսել բաց թողնված ժամկետը վերականգնելու որևէ հնարավորություն: Այսպիսի

³ ՀՀ սահմանադրական դատարանի 24.02.2012թ. թիվ ՍԴՌ-1009 որոշում:

իրավակարգավորումը ինչպես իրավական որոշակիության, այնպես էլ սեփականության հիմնարար իրավունքին համապատասխանության տեսանկյունից վիճահարույց է:

Օրենսդրական բացի սահմանադրականության կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանն իր 14.09.2010թ. թիվ ՍԴՈ-914 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«7. Օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե տվյալ օրենսդրական բացը հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե՞ իրավաստեղծ մարմինը նման իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2010թ. փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է «Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համարեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ **նորմատիվ պատվիրանի բացակայությամբ**, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

Հարգացնելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը»:

Սույն սահմանադրական վեճի առարկա հանդիսացող նորմը, իրավական որոշակիության սկզբունքի խախտման հետ միաժամանակ, չի ապահովում անձի սեփականության իրավունքի իրականացումը: Ուստի, այս պարագայում, կարծում ենք, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- **«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի և 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը խնդրահարույց է:**

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան